

Այսպէս կենտոս վիճակի մէջ էին Լեհաստանի խնդիրները, երբ վախճանեցաւ Մովսէս կաթողիկոս: Իր յաջորդն Փիլիպպոս կաթողիկոս շարունակեց բանակցութիւնները թղթերով եւ պատգամաւորներով մէկ կողմէն Լեհաստան եւ միւս կողմէն Հռոմի հետ: Հասցիւ 1653ին յաջողեցաւ Փիլիպպոսի խաղաղ հաշտութեամբ վերջ տալ Լեհաստանի վրայ հասնել վէճերը եւ ժողովուրդին եւ Եպիսկոպոսին մէջ հաշտութիւն մը գոյացնել: Յովհաննէս Վ. Արղնցի իւր խոսքով եւ իմաստուն ընթացքով մեծապէս նպաստածատոյց եղաւ այս խաղաղութեան գործին:

Զմեղ այս տեղ չեն հետաքրքրեր Նիկոլ արքեպիսկոպոսի պատմութեան անդրագոյն շրջանի դէպքերը, որոնք տեղի ունեցան 1634էն ետքը:

Յետահայեաց ակնարկ մը կը բերէ զմեզ այն համոզման, թէ իրերը պիտի չառնէին այն ընթացքը եւ պիտի չյանգէին այն հետեւութեան, ուր թողուցինք, եթէ Գրիգոր Կեսարացի եւ Պապական վարդապետ գիտնային կանոնախն ճանչնալ 25ամեայ եպիսկոպոսին նկարագրի թերութիւնները, եւ իրրեւ դաստիարակ ջանք տանէին մատաղատունկ ծառին ծուրթիւնն ուղղել քան արմատէն ի բաց խլել, երբ մանաւանդ օտար հողի մէջ ձգուած էին անոր խիղբերը, ուրիշ հիւթով սնած, ուրիշ կլիմայի տակ աճած, ուրիշ շրջանակէ շրջապատուած: Պիտի ըսեմ, որ երկպառակութեան սերմը յանձնեց հողի Մելքիսեդեկ կաթողիկոս, Գրիգոր Կեսարացի ջուր տուաւ անոր եւ աճեցուց Պապական վարդապետ:

Արտաքին՝ ոչ քաղաքական եւ ոչ եկեղեցական կողմէ միջամտութիւն տեղի չունեցաւ կուսի բովանդակ ընթացքին: Երբ արքեպիսկոպոսը գիմեց արտաքին պաշտպանութեան, յայտարարելով ինքզինքը կաթողիկէ, գտաւ աջակցութիւն: Որովհետեւ ունէր ձեռքը թաղաւորական հաստատագիր, ուր կը ներկայանար Լեհաստանի մէջ ապրող Հայերու օրինաւոր հովիւ, թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական իշխանութիւնները պաշտպան հանդիսացան իր իրաւունքներուն: Մովսէս կաթողիկոս գտաւ ինքզինքը կատարուած իրողութեան մ'ատջեւ. իր ոյժը չզօրեց հոսանքին ստաջն առնել կամ ուրիշ ընթացք տալ իրաց:

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



**ԹԻ ԻՆՉՊԵՍ ԿԸՉՄՈՒԵՑԱԻ ՀԱՅ ԱՉԳԸ ԸՍՏ ՏԵՍՈՒԹԵԱՆ Հ. Ն. ՏԱՅԵՆԻ\***

Իմ դիտողութիւնէս ի մասին «Վերք» անունն՝ չի հետեւիր թէ ես Հայերը Փոխուցի կը նկատեմ: Յունական այս աւանդութեան դէմ որոշ գրած եմ արդէն գործոյս մէջ՝ «Ուսումն դասական հայերէնի». զլ. Լեզու Փոխուցացոյց:

Հայ ազգը կազմած են այլ եւ այլ տոհմեր: Ասոնց մին կամ միւսը կրնայ Արեւմուտքէ եկած ըլլալ, ժամանակ մը Փոխուցի բնակած ու անցած Փոքր ու Մեծ Հայք: Բայց անհատական կը դտնեմ այն կարծիքը, թէ ամբողջ Հայ ժողովուրդը Փոքր-Հայք բնակած ըլլայ եւ մեծ Հայք անցած կամ ստիպուած անցնելու՝ Գամբաց (Կիմմերացոց) արշաւանքին հետեւութեամբ: Արդ Գամբաց արշաւն եղած է՝ անցնելով Կաւկասն ու Արեւելեան Հայաստան՝ դէպ ի Իրան: Յետոյ միայն Իրանէ անցած են Կենդրոնական եւ Հարաւային Հայաստանի վրայէն դէպ ի Փոքր-Հայք ու Գամբիք (Կապպադովկիա): Որովհետեւ արշաւն եղած է Արեւելքէ դէպի Արեւմուտք, անկարելի է, որ Հայ ժողովուրդը մղուէր Արեւմուտքէ դէպի Արեւելք: Հայք թէ ի Փոքր եւ թէ ի Մեծ Հայք կը նստէին անշուշտ՝ ինչպէս Գամբաց արշաւէն ետքը՝ նոյնպէս սպասուած պէս անկէ յառաջ: Բայց կարելի է որ Հայոց այն մասն՝ որ Հալիսի արեւելքը կը բնակէր, մղուած ըլլայ անով դէպ ի արեւմուտքն Հալիսի, ի Փոխուցիա, ուր ժամանակաւ ձուլուեցան: Ուստի կարելի է որ յոյն աւանդութիւնն նաեւ (այսպիսի) իրական հիմնունենայ:

Հայոց գլխաւոր զանգուածը՝ Հայք կը նստէին ոչ միայն ի Փոքր-Հայք (ցորչափ ասի Հաթայ «Վերին Աշխարհ») չէր վերաբերեր), այլ նաեւ Մեծ Հայոց լեռնաշխարհի մէջ, գոնէ Արեւմտեան Հայաստան, ո՛չ միայն Գամբաց արշաւէ յառաջ, ո՛չ միայն յառաջ Բան Ուրարտեանց տիրապետութիւնը, այլ նաեւ յառաջ

\* Հետեւեալ տողերը հայերէն ամփոփումն է գերմաներէն նամակի մը, գոր գրած է Ժ. Յ. Տաշեան աւ ուսուցչապետն Յ. Կարսա 26—29 Յունիս 1931 թուականով ի Բաղ-Հայ, ուր կը գտնուէր նոյն ժամանակ օգտուելու համար տեղայն գերմանացիներէն: Ամփոփումն կատարուած է հեղինակին ձեռքով: Կը ներկայացնեմ գայն ամփոփոյս, ի բաց յայտարարով միայն մուտքն եւ վերջաւորութիւնը, որոնք կը հային ուրիշ խնդրոց: Հեղինակին մտադրութիւնն էր ընդարձակել տեսութիւնն եւ իբրեւ առաջին քաժին մը կցել «Հաթայ եւ Ուրարտեանք» գործին: ԽՄԲԱԳԸ.

Բան առ հասարակ թրակեան-փոխուցական գաղթականութիւնը դէպ ի Փոքր-Ասիա: Հաթեան բեւեռագիր բնագրաց համեմատ Հայաւայի ժողովուրդն արդէն այնչափ հզօր էր, որ Հաթէի առաջին մեծ արքայն ստիպուած էր դաշինք կուլ Հայաշուայի Հուկկանաւ արքայի հետ, որպէս զի ազատ ձեռք ունենայ Միտաննի դէմ: Այս դաշինքը (ԺԱ. դար Ն. Ք.) Բողազքէօյի դիւանին ծանօթ ամենահին դաշինքն է (Hukkaraš հակառակ անունն անանութեան՝ անշուշտ չէ հայ գրուցոց «Հայկ» նահապետը. ինչպէս որ Ուրարտեան Արամէ արքայն նոյն գրոյցին մէջ իբր Արամ կ'երեւայ): Հայաշա անունն ձեւին մէջ -(a)ša աւարտ մըն է, որ կայ ուրիշ անուննց մէջ ալ: Ուստի Հայ-արդէն ՓՅ. դարուն կը նստէր ի Հայաստան: Հայ անունն՝ ինչպէս Դուք ալ կ'ընդունելք, լաւագոյն կը մեկնուի Hattis: Արդեօք հին Hattis մէկ մասը Արեւմտեան Հայաստանն անցած էր, երբ Նեշաչի թաղաւորք, ուստի հնդիկերոպական Հաթեր՝ գրաւեցին այն մայրաքաղաքը (Ի. դար Ն. Ք.): Կարելի է. բայց սպասոյց չունինք: Բաց աստի չեմ հաւատար թէ Նախահաթեր այնպէս սպասով «ոչ-եւրոպական» ըլլան: Բանի մը բառերու (Glosse) մեկնութիւնը բաւական չէ. եւ առ հասարակ այս խնդիրը նորէն քննելի է: Նաեւ Միտաննիէն այնպէս սպասով «Կաւկասեան» չէ. շատ դիւրութեամբ կարելի է որ ի վերջոյ այս լեզուն իրրեւ հնդիկերոպական ցուցուի. ա՛յս է իմ սպասուածութիւնս այս լեզուի մասին: Յամենայն դէպս Հայաշայի ժողովուրդն Արեւմուտքէն եկած էր. հաթեան բնագիրը կը ցուցնեն թէ ընդհակառակն Հայաշա կը ձգնի Արեւելքէ դէպի Արեւմուտք դիմելու, արշաւանքներ կ'ընէ դէպի «Վերին Աշխարհ», ուստի Կապպադովկիա: Ինչպէս Եռալէ (հայ.՝ Ծոփք), ինչպէս Ալշէ (հայ.՝ Աղձնիք), նոյնպէս Հայաշա (= Հայք) եւն կազմած են հայ ազգին գլխաւոր զանգուածը: Ի հարկէ նաեւ Ուրարտեանք (կամ «Ալարտեանք») կամ Ուրարտացիք: Տակաւին որոշ չէ թէ ուսկի՞ց եկած ըլլան Ուրարտեանք: Բայց ասոնք նախ Վանայ-ծովու շուրջը կը նստէին. եւ ասկէ սկսած են իրենց տիրապետական արշաւանքը: Բայց տիրած են Հայաստանի միայն մէկ մասին: Արեւելք իրենց իշխանութիւնը չէ անցած Այրարատեան դաշտէն անդին. դէպ ի Հիւսիս հասած են Մեւանայ լիճը եւ Չարիշատի լիճը (Կարսի հիւսիսը). Հիւսիս-արեւ-

մուտք հասած են միայն մինչեւ Բասեն (Կարին, Դերջան, Եկեղեաց եւն չունին ուրարտեան արձանագրութիւններ): Դէպի Հարաւ միայն հզօր եղած են. եւ Արածանոյ դժով հասած են Եփրատ, ուստի Մեծ Հայոց արեւմտեան սահմանը: Ծոփք եւ Աղձնեաց աշխարհաց համար միշտ կոտլած են Ասորեստանեայց դէմ. տեղ տեղ անշուշտ ուրարտեան գաղթականութիւնը ծագած են. բայց նոյնն ըրած են հոն նաեւ Ասորեստանեայց: Ուստի Ուրարտացիք հոս միայն տիրող խաւն էին. նաեւ Հայաստանի միւս մասերուն մէջ ալ միայն տիրապետողներ եղած պիտի ըլլան:

Հայաշա-ներն ի հարկէ անհետ չէին եղած, ո՛չ ալ նոյնպէս Մանգա-ները՝ Արեւելեան Հայաստանի մէջ: Առ հասարակ այս Արեւելեան Հայաստան (ուստի նաեւ Արարատի դաշտը) անցման քաղաքն էր ազգաց: Իրանեանք եւ Հնդիկք ի Միտաննի, ուստի ի Հիւսիսային Ասորեստան եւ ի Հարաւային Հայաստան, այս ճամբով եկած են: Ուստի Հայաստան սպասով սպէս չէր միաձոյլ «ուրարտեան»: Եթէ այսպիսի միաձոյլ ժողովուրդ մ'ըլլար, անհասկանալի կը մնայ թէ ինչո՞ւ Արձանագրութիւնը անընդհատ արշաւանքներ կը յիշեն՝ երկիրն իրենց ձեռքը պահելու համար: Ուրարտեանք «Կաւկասեան» էին: Չեմ կարծեր: Եւ ոչ կարողացած են հասնելու մինչեւ Կուրի գիծը, ո՛ւր մնաց թէ մտնելու բուն Կաւկասեան աշխարհ մը՝ օրինակ ի Վրաստան: Իբր «Կաւկասեան»՝ այս կէտը չի մեկնուիր:

Հայաշայէն եւն ետքը՝ հայ ազգը կազմելու նպատակով են արք աշխարհին Arman (Ուրմիւլ լճին շուրջը): Ասոնք Հայաստան մտած են՝ Մարաց արշաւանքի հետեւութեամբ: Անոր համար Արմանիա, Արմինիա եւն միայն անպան արձանագրութեանց մէջ կ'երեւան. եւ Դարեհի ծանօթ արձանագրութեան մէջ տակաւին մնացած է Ուրուստու (Ուրարտու)՝ Բարեւական խմբագրութեան մէջ:

Կարծեմ թէ J. Marquartի այն գաղափարն ուղիղ է, այն թէ Հայք դիւրուորական գաղթականութիւն ըլլան, գորտնք հոն բերած են Մարք՝ աշխարհը պահելու համար: Միայն թէ անոնք չէին Հայք Արեւմուտքէն, այլ «Արմէնք», այն է՝ արք Արման աշխարհի: Այս բնակչութիւնն անշուշտ երանեան էր. եւ անով կը մեկնուի այն մեծ ազդեցութիւնն, գորր ըրած է Երանեան լեզուն Հայերէնի վրայ: Այս

Արմանի և վերջոյ ձուլուեցան. բայց այս ժամանակէն անշուշտ այլ եւ այլ նախարարական տոհմեր, որոնք հայ պատմութեան մէջ դեր կը խաղան. ուրիշներ ի հարկէ՝ Պարսկական եւ Պարթեւ ժամանակէ:

Այսպէս կը մտածեմ հայ ազգի կազմութեան մասին. եւ ասով կը մեկնուի թէ ինչո՞ւ Արմենիա պաշտօնական նոր յորջորջանքը Հայոց քով սովորական չեղաւ. բուն Հայք աւելի գերիշխող եղած են:

Թէ ի՞նչ էր Հայաշայէ, Մանդայէ եւն յառաջ՝ Հայաստանի մէջ, տակաւին լաւ չէ քննուած:

Հ. Յ. Տ.



ՎՐԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն):

Զ. ԳԼՈՒԽ

Սասանեան հարստութիւնը: Միւրիան քաղաքն եւ իր դաւանութիւնները (կրակապաշտ, կուպաշտ եւ ապա քրիստոնեայ): Բիւզանդացւոց յարաբերութիւնները Վրաստանի հետ: Մրցումը բիւզանդացիների եւ պարսիկների մէջ Վրաստանի շուրջը: Վրաստանի առաջին քրիստոնեայ քաղաքները: Վախքանգ Գուրգասյան մեծ արքան եւ նրա սխրագործութիւնները: Վրաստան պարսից գերիշխանութեան տակ: Հերակլ կայսրը Վրաստանում: Արաբացիների արշաւանքը: Զուլանջէր պատմագիրը:

Պարսից Սասանեան հարստութեան նախահայրը, Պերսեպոլիս Անահիտի տաճարի մի քուրմն է եղած, որի անդրանիկ որդին Արդէշիր յաջողել է վերակենդանացնել պարսկական Աքեմենեան միապետութիւնը<sup>1</sup>: Շապուհ Ա. որին այնքան յաճախ յիշում են հայ պատմիչներն, այս Արդէշիրի որդին էր: Շապուհ անուան ձեւը հայ գրչի արդիւնք է պարսկականը իսկապէս Շահպուհ է (Chahpuhr), որից առնելով Վրաց Տարեգիրքն էլ գրում է՝ Սապոր:

<sup>1</sup> Clément Huart, La Perse antique et la civilisation Iranienne. Paris 1925, էջ 147:

Միւրիան, Վրաստանի Սոսորդեան — Սասանեան հարստութեան առաջին արքան, այդ Շահպուհի որդին էր: Հայ պատմագիրը նրան Միհրան է կոչում, փոխանակ Միւրիանի:

Միւրիան հաղիւ Եօթնամեայ մանուկ էր երբ Մծխէթայի դահի վրայ բազմեց, եւ մինչեւ նրա չափահաս լինելը նա գտնուում էր պարսիկ Միւրվանոս իշխանի «գաւառապետութեան» այսինքն խնամակալութեան տակ:

Միւրիան զբաղաւորական էր իր հօր նման, իրբեւ պարսիկ, բայց յետոյ իր հպատակ վրացիներին հաճելի լինելու համար սկսել է նաեւ օտար կուսքերի երկրպագել. «Մնեալ եւ հասեալ յարս, ասում է Ջուանչէր, սիրեաց զՎիրս, նոցա լեզուան վարչէր եւ երկրպագէր ի ինգ պատկերաց<sup>2</sup>, առընթեր կրակարանին»: Վրացիք պահանջել էին իրենց նոր թագաւորից որ «մի հանցէ գնոսա ի կրօնից իւրեանց, զի լաւ է, ասեն, մեռանել մեզ քան ի բայ կալ յօրինաց հարցն մերոց»:

Այս Միւրիանն է, որ երրորդ անգամ փոխում է իր կրօնը, Դ. դարում, քրիստոնէութիւն ընդունելով: Միւրիանի քրիստոնէութեան յարելու պարագաները ձեւուած են Հայոց Տրդատ թագաւորի օրինակի վրայ, ինչպէս պիտի տեսնենք իր տեղում: Տարեգիրքը հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Միւրիանի եւ հայ Տրդատի մէջ տեղի ունեցած յարաբերութիւնների վրայ: Միւրիան եւ Տրդատ, նախ քան քրիստոնեայ դառնալն ընդհարումներ են ունեցել միմիանց հետ: Միւրիան յենում էր իր պարսիկ հայրենակիցների վրայ: Բայց վերջ ի վերջոյ, յաղթութիւնը մնում է Հայոց կողմը: Սորենացին թէեւ պատմում է Տրդատի արշաւանքը իր սխականների դէմ, բայց Միւրիանի անունը չէ տալիս: Զամչեան անձանօթ է Վրաց Տարեգիրքին, որ շատ բնական է, քանի որ իր ժամանակ սա դեռ լոյս չէր տեսել, ուստի նոյնպէս չի յիշում: Սակայն Տրդատին հպատակաւ երկիրների շարքում նա յիշատակում է Վրաստանը: Երեւի Միւրիան՝ հիւսիսային լեռնականների հետ միացած ճգնել է դուրս գալ Հայոց ազգեցութիւնից, որ առիթ է

<sup>2</sup> Վրաց Տարեգիրքն ասում է 7 պատկեր, այսինքն կուսք եւ ոչ թէ 5, որոնց անուններն էլ յիշում է, Գացայ, Գայիմ, Արմազ, Այիանա, Դայանա, Զադէն եւ Ափրոզիաէ: Վրացերէն Տարեգիրքի եւ Ջուանչէրի հայերէն թարգմանութեան մէջ եղած այս տարբերութիւնը կարող էր յառաջ գալ նրանից, որ հայերէն թարգմանութեան բնագիրն ընդօրինակող գրիչը՝ հայերէն Ե. եւ Է. տառերը (երբեւ 5 եւ 7) չփոխել է Ե. (7) ի տեղ Ե. (5) է կարգացել:

տուած Տրդատի «ընդդէմ հիւսիսականաց» արշաւանքին:

Միւրիանի ժամանակ է, որ Բիւզանդական ազգեցութիւնը մեծ քայլեր է առել Վրաստանում, մինչեւ այն աստիճան, որ Վրաց Տարեգիրքի ասելով այնուհետեւ Վրացի թագաւորները յաճախ իրենց որդիքը պատանդ են ուղարկել Բիւզանդիոն: Միւրիան իր Բակար կամ Բահար որդուն իբր թէ պատանդ է տուած եղել, եւ Կոնստանդինոս կայսրն էլ Միւրիանի նորագարձ քրիստոնէութեան վրայ վստահելով պատանդն ետ է դարձրել, ասելով՝ «Տէրն մեր լիցի երաշխաւոր ի միջի մերում, կալ քեզ մեզ հնազանդութեամբ» գրում է Ջուանչէր:

Տարեգիրքի ասելով Կոնստանդինոս այնքան է ուրախացել Միւրիանի քրիստոնեայ լինելը լսելով, որ նրան ընծայ է ուղարկել «գոտից Տեառն տախտակն եւ գրեւեռան» գրում է Ջուանչէր...

Միւրիանին յաջորդում է նրա որդին Բակար Ա. կամ Բահար (ըստ Ջուանչէրի, 324—364), որի թագաւորութեան սկիզբը գտնութիւն է ծագում Հայոց եւ Վրացիների մէջ: Արշակեան տոհմի՝ այն է Վրաստանի հայ արքայական տան յիշատակը դեռ շատ թարմ էր եւ հայերը Միւրիանի մահից օգտուելով աշխատել են նրան դահլիճէց անելով դարձեալ հայ արքայազն բազմեցնել: Բայց Բակար ընդդիմանում է եւ պարսկական զորքի օգնութեամբ մինչեւ իսկ յարձակում է Հայաստանի վրայ եւ հասնում է մինչեւ Վաղարշապատ: «Հասեալ ի դրունս Վաղարշապատու, պաշարէին» գրում է Սորենացին: Բայց Բաղարատ ասպետն եւ Վահան Ամատունին իրենց զորքով յաջողում են նրանց դուրս վանել Հայաստանի սահմանները: Այս պատերազմները նկարագրուած են թէ՛ հայ եւ թէ՛ Վրացի պատմիչների քով, բայց մեծ չփոթութիւն կայ թէ անունների եւ թէ թուականների, որի վրայ աւելորդ է կանգ առնել:

Բահարին յաջորդել է Միհրդատ (364—379), որի որդին Վարազ-Բակար (379—393) նոյնպէս իր աչքն ուղղել է դէպի Կ. Պոլիս եւ սերտ յարձերբութիւններ է պահպանել յունաց հետ, բայց այս յարաբերութիւնները զրգուել են պարսիկներին, որոնք թէ Հայաստանի եւ թէ Վրաստանի վրայ իրենց գերիշխանութիւնը աշխատում էին պահպանել ընդդէմ Բիւզանդիոնի: Պարսիկներն սկսում են արշաւանք երկու երկիրների դէմ էլ: «Յաւուրան յայնոսիկ, ասում է Ջուանչէր, եկն

գորաղուին Պարսից, մեծաւ ուժով ի սահմանս Հայոց եւ Վրաց եւ խնդրէր հարկս ի Հայոց եւ ի Վրաց...: Եւ կնամարդին այն Վարդարաք (= Վարազ-Բակար) երկուդայից եղեալ թագաւոր ի Ջորն Կուխէթոյ. եւ եկին Պարսիկք եւ շինեցին բերդ ի դրանն Տփլսեաց՝ հակառակ Մցխէթայ»: Այս բերդն է, որ յիշում է Ք. Յ. կալա (բերդ) կոչումով: Վարազ Բակար ստիպուած է լինում հպատակուել Պարսիկներին եւ խաղաղութիւն է կնքում յանձն առնելով հարկ տալ նրանց եւ Քարթլիսի անձուկ սահմաններով բաւականանալ:

Վարազ-Բակար<sup>3</sup> ամուսնացել էր Հայոց Տրդատ թագաւորի թոռի հետ, որից ծնուել է մի «հրաշալի դուստկ», ըստ Ք. Յ. ի (Վրաց մեծ Տարեգիրքը), որ չէ դադարում նրան գովարանելուց: Այս տղան, որ Մուրվանոս է կոչում, դեռ մանուկ եղած ժամանակ կարգացել է ամբողջ Ս. Գիրքը (Ք. Յ. ասում է «բոլոր սուրբ գրեանքը») եւ մեծացել է «Աստուծոյ շնորհքի մէջ»: Նա հաղիւ 12 տարեկան էր, երբ հայրը նրան ուղարկում է պատանդ թէպոս Կրտսեր կայսեր մօտ: Մուրվանոս Կ. Պոլսում սովորում է փիլիսոփայութիւն եւ յունարէն ու ասորերէն լեզուները: Ամբողջապէս կրօնական եռանդով ոգեւորուած, նա թողնում է Կ. Պոլիսն եւ մի ներքինու հետ միասին գնում է Երուսաղէմ եւ այնտեղ կրօնաւոր է դառնում Պետրէ Մուրվանոս անունով: Քիչ յետոյ դրանով էլ չբաւականանալով, անապատ է քաշում, վանքեր է կառուցանում եւ ապա՝ աստուածային պատուէրին հետեւելով եպիսկոպոսական աստիճան է ընդունում. վերջապէս սուրբ է դառնում եւ բազմաթիւ հրաշքներ է գործում: Բակարի միւս որդիքը փոքրահասակ լինելով նրա մահից յետոյ Վրաց իշխանները թագաւոր են հռչակում Տրդատին (393—405), «գորդի գատերն Մեծին Տրդատոյ, աշխարհին Հայոց արքայի, այր լաւ եւ մեծահասաւ եւ իմաստուն, որ դադարեցոյց զգոռայն Պարսից եւ շինեաց եկեղեցիս եւ յաւելուած արար ամենայն բարեաց՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց» ասում է Ջուանչէր:

Երբ Վարազ-Բակարի որդին՝ Փարսման Դ. թագաւոր է նստում, յունաց հետ համաձայնելով մերժում է հարկ տալ Պարսից. նա միայն 3 տարի է թագաւորում (405—408):

<sup>3</sup> «Վարազ» — նրա հայերէն վերադիր կոչումն է:

